


Իրանահայ համայնք

«Քուշեշ Դավթյան» դպրոցը վերածվեց Իրանում Հայաստանի հանրապետության դեսպանատան



17 Ապրիլ, 2011 - Թեհրանի հայոց թեմի «Քուշեշ Դավթյան» ազգային դպրոցը, որը երկար տարիներ ծառայել է մեր մատաղ սերնդի հայեցի դաստիարակման եւ մի առ ժամանակ է ինչ փակվել է կրկին շահագործման է ենթարկվել բայց որպես Իրանում ՀՀ դեսպանատուն: Թվականիս հինգշաբթի ապրիլի 14-ին պաշտոնակնա մի արարողությամբ Թեհրանի ազգային առաջնորդարանի դահլիճում Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ արք. Սարգսյանի, Պատգամավորական ժողովի, Թեմական խորհրդի ներկայությամբ դպրոցի բանալին հանձնվեց Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանին: Բանալին հանձնելուց առաջ թեմակալ առաջնորդը, Թեմական խորհրդի ատենապետ՝ դոկտ. Արդա Հովհաննիսյանը եւ Իրանում ՀՀ դեսպանը ստորագրեցին փաստաթղթերը: Կազմակերպված միջոցառման սկզբում Սրբազան Հայրը ողջունեց դեսպանին եւ դեսպանատան անձնակազմին եւ նշեց. «Պատմականորեն մեզ համար շատ սիրելի եւ իր պատմությամբ հուզականությամբ լեցուն մեր դպրոցը, որը մեր բոլորի կամքից անկախ փակվել էր, տրամադրվում է Հայաստանի դեսպանությանը, որպես դեսպանատուն եւ այն մխիթարությունը կունենանք, որ ի վերջո այդ շենքը պիտի շարունակի իր առաքելությունը ընդհանուր հայ կյանքի մեջ այս անգամ կենտրոնը, լինելով Հայաստանի Հանրապետության դեսպանության»: Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանը իր արտահայտությունների ընթացքում հետեւյալ կերպով արտահայտվեց. «Մեզ համար հարազատ դարձած ազգային առաջնորդարանի այս գեղեցիկ սրահում մի պատմական ու կարեւոր իրադարձության ակնատեսն ենք, որի առիթով մեր արտաքին գործերի նախարարության Հայաստանի կառավարության եւ դեսպանության անունից շնորհակալություն եմ հայտնում այս հայաշունչ շենքը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը հանձնելու առիթով»:

6 միլիարդ ռիալի հատկացում՝ իրանահայ ֆուտբոլին կրկին դիմավորելու նպատակով
11 Մայիս, 2011

Իրանահայ համայնքը տարբեր ասպարեզներում ականատես է եղել պետական այրերի եւ Իրանի տարբեր խավերի իր հանդեպ ցուցաբերած նրբանկատ վերաբերմունքին: Նոյն ուղղությամբ եւ ի շարունակություն երկար ժամանակների հոգատար ընթացքի՝ ինչպես արդեն տեղեկացված է մեր սիրասուն

համայնքը, իրանահայ ֆուտբոլի վերակազմակերպման նպատակով եւ հայ երիտասարդ մարզիկներին մրցության դաշտ վերադարձնելու գեղեցիկ հեռանկարով՝ Իրանի մարզական պատասխանատու այրերն ու հիմնարկները խոստացել էին որոշ նյութական հատկացումներ կատարել: Անցյալ տեղեկանք-զեկույցով մեր սիրելի մարզասերներին հայտնել էինք մեկ միլիարդ ռիալի հատկացման մասին, իսկ այս անգամ ուրախ ենք հայտնելու, որ հիշյալ գումարը համալրվել է 5 միլիարդ ռիալի հատկացմամբ եւս, ընդ որում՝ 6 միլիարդ ռիալ կազմող այս նպաստը ավանդ է տրված Հայ մշակութային «Արարատ» կազմակերպության մոտ:



Անցյալ ամիսներում Իսլ. խորհրդարանի իրանահայ երկու պատգամավորների երկարաշունչ հանդիպումների ու կիրառած հետեւողական ընթացքի արդյունքն է ստացված գումարը, որն ամբողջությամբ կհատկացվի համայնքիս ֆուտբոլի հավաքականը վերակազմելու աշխատանքներին: Վստահաբար, բոլոր խավերի ու մանավանդ սրտցավ միությանների եւ պատասխանատու ազգային կազմերի օժանդակությամբ՝ հնարավոր է լինելու իրագործել այս դժվարին եւ միաժամանակ ցանկանալի ու առաջնային ծրագիր-նպատակը:

Իրանի Իսլամական խորհրդարանում հյուսիսային իրանահայության պատգամավորի գրասենյակ

ԹԱԻՐԻԶ - Ս. Ստեփանոս վրդ. Փաշայեանի բարիգալստեան երեկոն

«Ալիք»-Մայիսի 8. Հովանաւորութեամբ Ատրպատականի հայոց Թեմական խորհրդի եւ նախաձեռնութեամբ Թարիզի Եկեղեցիների կանանց խնամակալ մարմնի, փետրարի 27-ին, Երեկոյեան ժամը 6-ին, Թարիզի հայոց ազգ. «Հ. Ոսկանեան» սրահում տեղի ունեցաւ Թարիզի ժամանակաւոր նշանակեալ հոգեւոր հովիւ Հոգշ. Ս. Ստեփանոս վրդ. Փաշայեանի բարիգալստեան երեկոն՝ ներկայութեամբ Ատրպատականի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի, Թեմական խորհրդի անդամ-անդամուհիների, շրջանում գործող բոլոր միութիւնների ու հաստատութիւնների ներկայացուցիչների, ինչպէս նաեւ շրջանում գտնուող հայ համայնքի զաւակների, որոնք շնորհատրեցին ու բարի գալուստ մաղթեցին Հոգշ. Հայր Սուրբին եւ ուժ, կորով ու համբերութիւն ցանկացան, ինչպէս նաեւ իրենց նւերներով պատուեցին Հոգշ. Հայր Սուրբին: Պետք է նշել ու գնահատել, որ Թարիզի «Հ. Ոսկանեան» սրահի տնօրէնութիւնը, համագործակցելով Խնամակալ մարմնի հետ, հիւրասիրեցին ներկաներին: Նշելի է, որ Հոգշ. Հայր Սուրբը շարունակեց շնորհատրանքներ ընդունել մինչեւ ժամը 8-ը:

ԴԻՒՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՂՄԱՐՄԻ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Շայաստամ

Շայկական անօդաչու թռչող սարքերը կարող են գործողություն իրականացնել թշնամու թիկունքում՝ ի տարբերություն ադրբեջականի



ՀՀ Չինված ուժերի ավիացիայի վարչության պետի տեղակալ Արմեն Մկրտչյանի խոսքերով՝ հայերն օժտված են ավիացիոն գեներով, ինչի շնորհիվ մեր ռազմաօդային ուժերը ցանկացած պահի կարող են համապատասխան հակահարված տալ Ադրբեջանին: Այս մասին Մկրտչյանը նշել է այսօր հրավիրված ասուլիսի ժամանակ: Արմեն Մկրտչյանը նաև նշել է, որ այսօր Հայաստանն ունի «անձնական նախագծեր»՝ հայկական արտադրության անօդաչու համակարգեր, որոնք շատ լավ աշխատում են և կարող են գործողություններ իրականացնել անգամ թշնամու խորը թիկունքում: ՊՆ ներկայացուցիչը նաև նշել է, որ Ադրբեջանի ռազմաօդային ուժերի հնարավորությունները չափազանցված են. «Այն անօդաչու ինքնաթիռները, որոնցով հպարտանում է Ադրբեջանը, ընդամենը հետախուզական միջոցներ են»: Ռազմական փորձագետ Արծրուն Հովհաննիսյանը ևս կիսել է այն կարծիքը, որ մենք կարող ենք ապահովել ՀՀ-ի և ԼՂՀ-ի պաշտպանությունը: Հովհաննիսյանի խոսքերով՝ տեղին չէ համեմատել Հայաստանի և Ադրբեջանի օդուժերը. «Հայկական օդուժը ստեղծվել է բանակի համատեքստում: Իրենցը՝ PR-ի համար»: Փորձագետի խոսքերով՝ Ադրբեջանական օդուժն ունի որոշ ավելորդ ճոխություններ, օրինակ տեխնիկա, որի համար համապատասխան մասնագետներ չկան: Արծրուն Հովհաննիսյանը նկատել է, որ Ադրբեջանը չունի լեռնային պայմաններում թռիչքներ իրականացնելու հնարավորություն, ինչի համար դիմում է Թուրքիայի աջակցությանը. «Բայց Թուրքիայում ևս տվյալ տեխնիկայի համար համապատասխան մասնագետներ չկան»:

HayNews.am 18.06.2011

ԻՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋՐԵՐԻՆ

Ինչպես տեղեկացնում է իրանական «Մեիր» լրատվական գործակալությունը, Իրանի ճանապարհների եւ տրանսպորտի նախարար Ռեզա Փիլիպայեն հայտարարել է, որ Թեհրանը ցանկանում է Հայաստանից եկող կառուցվելիք երկաթուղային ցանցը Իրանի տարածքով հասցնել մինչեւ միջազգային ջրեր: Փիլիպայեն կոնկրետ նշել է, որ Հայաստանի երկաթուղային ցանցը միջազգային ջրերին կմիանա իրանական Բենդեր-Աբբաս նավահանգստի միջոցով: Նախարարը նշել է, որ նախագծվող Հայաստան-Իրան երկաթգիծը կունենա ընդհանուր 540 կմ երկարություն, որից 480 կմ-ն Հայաստանի տարածքով կանցնի, 60-ը՝

Իրանի: Փիլիպային անդրադարձել է նաեւ Հայաստանում ավտոճանապարհ կառուցելու ծրագրին, ընդգծելով, որ այն «կունենա 624 կմ երկարություն եւ կկապի Իրանը Հայաստանով Վրաստանի հետ»: Նախարարը վստահեցրել է, որ «իրանական ընկերությունները պատրաստ են մասնակցելու Հայաստանում ավտոճանապարհի կառուցման աշխատանքներին»:

ԱՐՄԵՆ ԵԳԱՆՅԱՆԸ՝ ԿԱՆԱՂԱՅՈՒՄ ԸՇ ԴԵՄՈՒՆ



Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Կանադայում ՀՀ դեսպան է նշանակվել Արմեն Եգանյանը, նստավայրը՝ Օտտավա: Եգանյանը ծնվել է 1968-ին Թբիլիսիում: Լեւինգրադի եւ Երեւանի պետական համալսարանների պատմության ֆակուլտետների շրջանավարտ է: 1996-97-ին աշխատել է Ռուսաստանում ՀՀ դեսպանության հյուպատոսական բաժնի 3-րդ քարտուղար, այնուհետեւ՝ ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության 3-րդ քարտուղար: 2002-03-ին ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության պետն էր, 2003-06-ը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության խորհրդականն էր, այնուհետեւ՝ մինչ այժմ, ՀՀ ԱԳՆ-ի Ամերիկայի վարչության պետ:

Արեւմտյան Շայաստամ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ
«1937-38 ԹԹ. ԴԵՐՍԻՄԻ ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՐԺԵ ԵՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ»

«Հարցը կներկայացվի ՄԱԿ-ին առընթեր Միջազգային քրեական դատարան»

Քեմալականների իթթիհատական ծագումն ու օսմանյան ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը Հայոց ցեղասպանության չլուսումնասիրված հարցերից է: Ժառանգականության պարագայում խնդիրը սոսկ Մուստաֆա Զեմալ Աթաթուրքի մերձակա շրջապատը կազմող հայ ազգի դահիճները, հայերի բնաջնջման երիտթուրքերի քաղաքականությունը շարունակելու քեմալականների հետեւողականությունը, նորաստեղծ Թուրքիայի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների հետ պետության հարաբերությունները հայկական հարցում իթթիհատականների կիրառած բնաջնջման այդ նույն սկզբունքով կարգավորելու մոտեցումը չէ, ոչ էլ հայերի հետ նաեւ ասորիներին ու հույներին ցեղասպանության ենթարկելը, այլ Դերսիմի կոտորածները, որոնք իրագործվել են 1937-38 թթ.:

Այլ կերպ, եթե հայերի, հույների, ասորիների պարագայում քեմալականները շարունակում էին իթթիհատական ցեղասպան քաղաքականությունը, ապա Թունջելի վերանվանված Դերսիմի կոտորածները նրանց ինքնուրույն նախաձեռնությունն էր: Ի դեպ,

թուրքական պատմագրության մեջ իբրև ապստամբություն հիշատակվող այս իրադարձությունները թուրք պետական գործիչներից առաջինը կոտորած է անվանել վարչապետ Էրդողանը:

Թեև նա դրանով բուռն հակադեմոկրատիկ է առաջ բերել ինչպես ընդդիմության, այնպես էլ երկրի քաղաքական շրջանակներում, սակայն հարցի վերաբերման պատճառ է դարձել, նպաստելով դրա վերանայման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը:

Թերեւս դրանով պետք է պայմանավորել հարցի առնչությամբ Դերսիմում ուսումնասիրություններ կատարելու եւ դա Միջազգային քրեական դատարան ներկայացնելու նախաձեռնությունը, որպեսզի Դերսիմի իրադարձությունները եւս ճանաչվեն իբրև ցեղասպանություն: Նախաձեռնող խմբի մեջ են ամերիկացի փաստաբան, պրոֆ. Բերրի Ֆիշերն ու Յրանտ Դինքի ընտանիքի դատապաշտպան Էրդալ Դողանը: Ինչպես ապրիլի 12-ին կշեղ էր «Ռադիկալ» թերթը, այս հանձնախումբն օրերս ուղեւորվել է Դերսիմ, հանդիպել է 1937-38 թթ. իրադարձությունների ականատեսներին եւ ուսումնասիրություններ է կատարել այն վայրերում, որտեղ իրականացվել են զանգվածային կոտորածները:

Դողանն ասել է, որ Դերսիմի իրադարձությունները համարժեք են ցեղասպանության, հարցը Միջազգային քրեական դատարան ներկայացնելու համար թուրք փաստաբան Էրեն Քեսքիսի եւ ամերիկացի փաստաբան Ֆիշերի հետ համատեղ աշխատանքներ են ծավալվում, հավաքվում են փաստեր եւ գրառում ականատեսների վկայությունները:

Բերրի Ֆիշերն ավելացրել է, որ 1937-38 թթ. իրադարձությունները բնույթով չափազանց ողբերգական են եղել, ցավոք, առ այսօր ոչ ոքի չի հետաքրքրվել դրանով: Այնուհետև նա ընդգծել է. «Եղել են այն վայրերում, որտեղ զանգվածաբար ոչնչացրել են կանանց, երեխաներին, տղամարդկանց: Ես այնտեղ ցավոք չտեսա զոհվածների հիշատակին նվիրված որեւէ հուշարձան, ոչ էլ լսեցի որեւէ խոսք իրադարձությունների մասին: Այդպիսի իրավիճակ ստեղծվել էր նաև հրեաների ցեղասպանությունից հետո: Ինձ վրա ծանր տպավորություն է թողել իրադարձությունների լուռության մատնվելը: Ականատեսները 80-90 տարեկան են: Թեև նույն բանը կատարվել է նաև հրեաների հետ, սակայն Թուրքիայում բնակվող ժողովուրդների համար կարելու է պատմության վերաբերմանստավորումն ու վկայությունների գրառումը: Այնպես ականատեսները կմեռնեն, որից հետո այլևս վկա չի մնա»:

Պրոֆ. Ֆիշերը հույս է հայտնել, որ վերստին կայցելի Դերսիմ, եւ հարցը մանրամասն քննարկելու նոր առիթ կունենա: Նա հնարավոր է համարել հարցին տարաբնույթ մոտեցումների ցուցադրումը եւ խոսել է կոտորածներին մասնակից պետական որոշ գործիչների դեմ Միջազգային քրեական դատարան հայցը ներկայացնելու հավանականության մասին:

Նա ասել է. «Սպանված կանայք, երեխաներն ու տղամարդիկ ո՛չ գրոհային են եղել, ո՛չ էլ որեւէ սպառնալիք են ներկայացրել Թուրքիայի Զանրապետության բանակի համար: 1937-38 թթ. իրադարձությունները որպես ցեղասպանություն բնութագրելու հարցում կան տարբեր կարծիքներ: Սակայն դա տեխնիկական խնդիր է: Ինձ համար կարելու էր թե իրադարձությունների բնութագրումն է,

այլ դրանց մասին ճշմարտությունը: Դերսիմում իրականացված զանգվածային կոտորածները, բնակչության բռնի տեղահանումը, տեղանունների փոփոխությունը կամ մայրենի լեզվի օգտագործման արգելումը բազմաթիվ առումներով ավելի են, քան մշակույթի եւ էթնիկ խմբավորումների ոչնչացումը»:

Յ. ՉԱԵՐՅԱՆ, «Ազգ»

ՇԱԹԵՐԵՆԻ ԴԱՍՆՆՅԱՑ ԹՈՒՐԵԱԿԱՆ ԸՆԿՆՆԱՐԱՆՈՒՄ

Մայիսին Ստամբուլի թուրքական համալսարաններից մեկն առաջին անգամ հայերենի դասընթացներ է կազմակերպելու: Որպես տարածաշրջանում առաջընթաց տերություն՝ Թուրքիան կարիք ունի գործարարների, մտավորականների եւ լրագրողների, որոնք անգլերենից ու ֆրանսերենից շատ ավելին գիտեն, ըստ «Հյուրիեթ դեյլի Նյուզի» ասել է Կադիր Յաս համալսարանից Սեդրադ Դիլերը:

Երեքշաբթի լուրը փոխանցող AFP գործակալությունը համառոտ իրազեկում է, թե Թուրքիայի եւ Յայաստանի միջեւ հարաբերությունները ծայրաստիճան լարված են «թուրքական կոտորածների» պատճառով, Յայաստանը պահանջում է կոտորածները ցեղասպանություն ճանաչել, Թուրքիան մերժում է, երկու երկրները չունեն դիվանագիտական հարաբերություններ: Յամալսարանում հայերենի առաջին դասընթացը կսկսվի մայիսի սկզբին: ԱՄՆ-ի «Մարշալ» հիմնադրամի միջոցներով ֆինանսավորվող նախագիծը մեկ տարում 5 դասընթաց է ներառում: Կադիր Յաս համալսարանը հունարենի եւ ռուսերենի դասընթացներ արդեն ունի եւ ծրագրում է դրանք համալրել քրդերենի, պարսկերենի ու արաբերենի դասընթացներով:

ԳՐԱԲՆՆՈՒԹՅԱՆ Ե ԵՆԹԱՐԿՎԵԼ ԱԹԱԹՈՒՐԵԻ 80 ՏԱՐԻ ԶՈՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Դրա ամբողջական տեքստը հրապարակվել է միայն վերջերս

Օրերս Թուրքիայում լույս է տեսել Աթիլա Օրալի «Աթաթուրքի գրաքննության ենթարկված նամակը» գիրքը: 80 տարի քողարկված 21-էջանոց այս նամակը ժամանակակից Թուրքիայի հիմնադիրը հասցեագրել է Թուրքական պատմական ընկերությանը:

Նախքան նամակին անդրադառնալը կշեռք, որ Թուրքական պատմական ընկերությունը Քեմալ Աթաթուրքի նախաձեռնությամբ ստեղծվել է 1932-ին: Հիմնադիր կազմի անդամները Աթաթուրքի հոգեդուստր Աֆեթ Իսանի զլխավորությամբ ձեռնամուխ են եղել կամայականորեն թուրքացնել ինչպես փոքր, այնպես էլ Առաջավոր Ասիայի այնպիսի հնագույն ժողովուրդներին, ինչպիսիք են խեթերը, շումերները, աքայացիները, աքքադացիները, խուրիները: «Թուրքացումից» չեն խուսափել նաև արիացիները, արիական լեզուն եւ մշակույթը:

Այս մոտեցումը պատահական չէր, այլ պայմանավորված էր ոչ թուրք ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում թուրքական ազգային պետություն ստեղծելու եւ բազմազգ երկրում նորաստեղծ պետության միասնականությունն ապահովելու քաղաքական առաջադրանքով: Այլ կերպ, թուրք գիտնականների առջեւ խնդիր էր դրվել գիտականորեն հիմնավորելու թուրքերի իրավունքները

Փոքր Ասիայի տարածքի նկատմամբ, մասնավորապես ապացուցելու, որ թուրքերն ունեն տեղական ծագում, իսկ թուրքիայի բազմազգ բնակչությունը՝ քրդերը, լազերը, արաբները եւ այլն, ռասայական միասնություն:

Թուրքական պետության միասնականությունն ապահովելու համար թուրքերի տեղական ծագումն ապացուցելու խնդիրը թուրք գիտնականների առջեւ քեմալ Աթաթուրքն էր դրել: Սակայն վերջիններիս անհեթեթության հասնող կեղծարարությամբ պայմանավորված նացիոնալ-շովինիստական ագրեսիվ տեսությունը խիստ քննադատության ենթարկվեց Արեւմուտքի գիտական շրջանակներում: 1938-ին Աթաթուրքի մահից հետո թուրքիայում հետզհետե ասպարեզ իջան պանթուրքիստները, որոնք էլ սկսեցին տիրել նախածեռնությանը թուրքական պատմական ընկերությունում:

Եթե նացիոնալ-շովինիստ պատմաբանները մարդկային մշակութային ամեն մի դրսեւորման մեջ տեսնում էին «թուրքական ոգի», ապա պանթուրքիստները թուրքալեզու բոլոր ժողովուրդներին հայտարարեցին միասնական մեկ ազգ եւ ազգի վաղեմի օրրանը համարեցին այն ամբողջ տարածքը, որը բնակեցված է թուրքերի հետ էթնիկ, պատմական առնչություն ունեցող ժողովուրդներով:

Արեւմտյան գիտնականների քննադատությանը չդիմացավ պանթուրքիստ պատմաբանների ոչ պակաս հակազիտական տեսությունը: Սակայն ժամանակի ընթացքում Արեւմուտքի եւ Թուրքիայի միջեւ հաստատվեցին սերտ կապեր: Այս պայմաններում աստիճանաբար նվազեց նշված տեսությունների քաղաքական պահանջարկը: Այդ ընթացքում վերստին միջազգային ասպարեզում հայտնվեց Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Դա ստիպեց, որ Թուրքական պատմական ընկերությունը վերագնահատի իրավիճակը: Հայոց ցեղասպանությունը դարձավ ընկերության գբաղմունքի հիմնական առարկան, իսկ ժխտողականության հիմնավորումը՝ գլխավոր առաջադրանքը վերջին տասնամյակներում, ինչի մասին, ի դեպ, վկայում են առաջադեմ որոշ թուրք գիտնականներ:

Գալով 16-17 օգոստոսի, 1931 թվագիր նամակին, ապա դրա ամբողջ տեքստը առաջին անգամ հրապարակվել է Օրալի գրքում, որի առնչությամբ հեղինակը, ըստ «Հաբեթուրքի» հունիսի 19-ի համարի, ասում է. «Թուրքական պատմական ընկերությունը ընդամենը մի քանի տող է հրապարակել նամակից: Այդ տողերի մեջ ուրույն տեղն ունի Աթաթուրքի հանրահայտ արտահայտությունը. «Պատմություն գրելը այնքան է կարեւոր, որքան պատմություն կերտելը: Եթե գրողը հավատարիմ չմնա կերտողին, ապա ճշմարտությունը, որն անփոփոխ է միշտ, մարդկությանը շփոթեցնող բնույթ կստանա: Դուք համամիտ եք ինձ հետ»: Նույնիսկ գրաքննության է ենթարկվել այս արտահայտությունը: «Դուք համամիտ եք ինձ հետ» նախադասությունը կրճատելուց հետո միայն Աթաթուրքի խոսքը արձանագրվել էր Թուրքական պատմական ընկերության կենտրոնական վարչության շենքի մարմարե ցուցանակի վրա»:

Այնուհետեւ Օրալը գրքից արած մեջբերումներով շարունակում է. «Խնդրո առարկան դասագրքերն էին: Աթաթուրքը միջնակարգ դպրոցների համար պատմության դասագիրք պատրաստելու

հանձնարարական է տալիս Թուրքական պատմական ընկերությանը: Ընկերությունը ձեռնամուխ է լինում դրան: Դասագրքի «Իսլամի պատմություն» եւ «Թուրքերի տեղը իսլամում» բաժինները գրի է առնում Եգիպտոսի Ալ Ազհար հոգեւոր համալսարանի շրջանավարտ Չաքիր Կադիրին: Սակայն Աթաթուրքը, պատճառաբանելով, թե այս բաժինները գրված են արաբական ազգայնականության ոգով, առարկում է: Նա կարգադրում է խմբագրական փոփոխություններ կատարել տեքստում: Սակայն փոփոխությունները նրան չեն բավարարում եւ նա մոլեգնում է: Ապա եւ ասում. «Ինչ կատարեմք է հետապնդում արաբական բանակին գերի ընկած մարդկանցից ստրուկների (ղուլամ) դասակարգ ստեղծելու եւ այս ստրուկների թուրքական ծագումն ընդգծելու նկրտումները, առանց ճշմարտությունը պարզելու չի կարելի այս բաժիններն ընդգրկել պատմության դասագրքերում: Պարոն Թեւֆիք (Թուրքական պատմական ընկերության նախագահ) Չաքիր Կադիրիի տիմար ծանոթագրությունները սրբագրելիս հաշվի առեք այս հանգամանքը: Ավելի լավ է առհասարակ գիրք չգրել, քան գրելու համար զոջալ: Գիտության ոլորտում կասկածամիտ լինելը Եգիպտոսի Ալ Ազհար մզկիթում կրթվածների գրածին հավատալուց անհամեմատ լավ է»: Ծագումով Չաքիր Կադիրի Ուզանը Թուրքիստանից է, ծնվել է 1878-ին, գրի առած բաժնում նա տուրք է տվել Ալ Ազհար մադրասայի շէյխերի տեսակետներին:

ՀԱՎՈՐ ՀԱՔՐՅԱԼ

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԳՐԱԾ ՎԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ԹՈՒՆԵՐԻ ՇՈՒՐԹԵՐՈՎ



Ալի, Դենիզ, Էլիֆ, Հալիդեյ, Նազի, Սալիհ, Մելեք...

Նրանք 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունն ապրած ու բռնի ուժով ինքնությունը կորցրած հայերի թոռներն են, որ այսօր ապրում են Թուրքիայում: Ինքնությունը կորցրած հայերի հիշողություններն արդեն թոռների շուրթերով գրի են առել թուրք մտավորականներ **Ֆեթիյե Չեթինն** ու **Այշե Գյուլ Ալթընայը**:

«Թոռները» հեշտ ընթերցվող գիրք չէ: Պատմությունները, որ պետք է կարդաք, դյուրին չէր ոչ պատմել, ոչ լսել, ոչ էլ գրի առնել», հավաստիացնում են հեղինակները:

«Երբ իմացա մեծ մորս՝ Հրանուշի պատմությունը, որ նա ինքնությունը կորցրած հայ է, ինձ հետաքրքրեց, թե քանի՞ նման պատմություն կա, քանի՞ ինքնությունը կորցրած կա, որ հանուն գոյատեւման վախեցել է ասել, որ հայ է: Իմ այս հարցին ոչ ոք չպատասխանեց», «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության

կենտրոնում» երեկ գրքի հայերեն տարբերակի շնորհանդեսի ժամանակ ասաց Ֆեթիյե Չեթիլը:

Նա համոզված է՝ նման գրքեր պետք է շատ տպագրվեն, որպեսզի 1915-ի մասին խոսվի: «Նման գրքերը մտերմացնում են մարդկանց: Չէ՞ որ սա համամարդկային ցավ ու վիշտ է, իսկ ցավն ու կարեկցանքը միշտ էլ մարդկանց մտերմացնում են»:

Ինքնությունը կորցրած հայերի մասին Չեթիլը 9 գիրք է հրատարակել: Նա վստահեցնում է, որ նման փոքրիկ պատմությունները կարող են մարդկանց մոտեցնել, դարձնել վշտակից ու ցավակից:

Չեթիլը պատմում է, որ «Մեծ մայրս» գրքի հրատարակումից հետո, Թուրքիայում ապրող բազմաթիվ անձինք դիմել են իրեն՝ ասելով, որ իրենք էլ հայերի թոռներ են, եւ ուզում են իմանալ նախնիների պատմությունն ու պատմել իրենց լսածները:

«Իսլամացած հայերի մասին շատ բան չգիտենք: Նրանք մասին փորձում են չխոսել ոչ միայն Թուրքիայում, այլև ընդհանրապես ամբողջ աշխարհում: Սակայն նրանք կան ու ապրում են մեր կողքին: Նրանք այսօր էլ ապրում են Թուրքիայում՝ զգուշավորության մթնոլորտում», ասում է Այշե Գյուլ Ալթընայն ու հավաստիացնում, որ նման գրքերը չափազանց կարևոր են հատկապես Թուրքիայի համար՝ պատմությանն առերեսվելու համար:

Յեղիսակները գրքում բարձրաձայնում են կարեւորագույն հարցեր, թե ինչու տատիկների ու պապիկների հայ լինելու մասին 100 տարի անց լսելն այդքան դժան է ցավոտ է թոռների համար:

Այշե Գյուլ Ալթընայնը համոզված է, որ ցավի եւ լռության մասին խոսելը կարող է օգնել, որպեսզի մարդկությունն ուրիշի ցավերն ու լռությունը նկատի, խոսի: Որպեսզի նպաստի դեռ չիրագործված ցավերի ու լռությունների կասեցմանը:

«Սա մի գիրք է, որով ցանկանում ենք, որ մեզ ներքե, որ մենք ինքնությունը կորցրած հայերի մասին երկար ժամանակ չենք խոսել: Մենք ձեր ցավի մասին շատ ուշ լսեցինք, բայց հիմա արձագանքում ենք», եզրափակում է Չեթիլը:

Այս գրքի հերոսները, մեզ հրավիրում են ծանոթանալու ինքներս մեզ հետ ու հիշեցնում, որ խաղաղ ապագայի չենք հասնի, մինչեւ ստերից եւ իրական վախից փրկվելով՝ անցյալի հետ չառերեսվենք:

Դիարբեքիի (Տիգրանակերտ) հայկական եկեղեցիում պատարագ է մատուցվել



20.06.2011

Սփյուռքահայերը և հայ հոգևորականները շաբաթ օրը կարճ պատարագ են մատուցել Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցում:

«Յուրիեթ» պարբերականի փոխանցմամբ, եկեղեցու վերականգնմանը մեծ աջակցություն են ցուցաբերել

պոլսահայերը, որոշ օժանդակություն ցուցաբերել են նաև Թուրքիայի մշակույթի նախարարությունը, Դիարբեքիի քաղաքի Սուր շրջանի ղեկավարությունը և սփյուռքահայությունը:

Դիարբեքիի քաղաքագլուխ Օսման Բայրեմիը, ողջունելով պատարագի մասնակիցներին, ասել է, թե գիտակցում է, որ իրենք բավականին ուշացել են՝ հայանպաստ աշխատանք կատարելու հարցում, սակայն արքեպիսկոպոս և փոխպատրիարք Արամ Աթեշյանն ասել է, որ եկեղեցու վերականգնումը սկզբից է դրել Դիարբեքիի հայերի կողմից իրենց ծննդավայրի այցելությանը և հույս հայտնել, որ այս միտումը կպահպանվի:

Որոշ փորձագետների համաձայն, Սուրբ Կիրակոս եկեղեցին համարվում է Մերձավոր Արևելքի ամենամեծ եկեղեցին:

Եկեղեցում այս տարվա հոկտեմբեր ամսին կանցկացվի ավելի մեծ պատարագ, որին ներկա կլինեն Յայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներն ամբողջ աշխարհից, ինչպես նաև քույր եկեղեցիների ներկայացուցիչներ և Սփյուռքի ճանաչված գործիչներ:

Եկեղեցու վերականգնման համար ծախսվել է շուրջ 2,5 միլիոն դոլար, իսկ եկեղեցու կանոնավոր գործունեությունը վերականգնելուց հետո կից շինություններում կգործի մի քանի մշակութային և գեղարվեստի կենտրոն: Ըստ «Ամերիկայի Ձայնի»:

HayNews.am

Կարսի Առաքելոց եկեղեցում եւս նախատեսում են տարին մեկ անգամ



պատարագ մատուցել

Վանի Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում պատարագ մատուցելու հետ կապված զբոսաշրջիկների առատ հոսքը Կարս քաղաք, ստիպել է, որ Կարսում եւս սկսեն գործընթաց՝ մզկիթի վերածված Կարսի Առաքելոց եկեղեցում պատարագ մատուցելու թույլտվություն ստանալու համար:

NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում, Կարսի տուրիստական ոլորտի պատասխանատուներից մեկը նշեց, թե Կարսում տուրիզմի զարգացումը խթանելու համար, քաղաքի բնակչությունը կողմ է, որ Կարսի բերդի հարեւանությամբ գտնվող եւ ներկայումս որպես մզկիթ գործող Կարսի Առաքելոց վերաբացվի որպես եկեղեցի եւ այնտեղ տարին մեկ անգամ պատարագ մատուցվի:

Նշեք, որ հայոց Բագրատունիների օրոք, 10-րդ դարում կառուցված Կարսի առաքելոց եկեղեցին պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ եկեղեցուց վերածվել է մզկիթի: Վերջին վերանորոգումից հետո էլ

խուսկցություն կար, թե այն կարող է դառնալ եկեղեցի կամ թանգարան, սակայն այն ի վերջո, վերածվեց մզկիթի, չնայած պատերի վրա առկա են քանդակված խաչեր եւ առաքյալների պատկերները:

Շահնահայերը քաղաքական կուսակցություն են ստեղծում



17.05.2011

Թուրքիայում բնակվող համշենահայերը պատրաստվում են քաղաքական կուսակցություն ստեղծել: Այդ մասին, ըստ Hurriyet-ի, մայիսի 16-ին հայտարարել է համշենահայերի առաջնորդներից համարվող Իսմեթ Շահինը: Կուսակցության անվանումը դեռ չի հայտարարվում, իսկ թղթական օրենքների համաձայն՝ այն չի կարող դառնալ այս կամ այն ազգային փոքրամասնության քաղաքական կառույցը: Շահինը հայտարարել է, որ իրենց կուսակցությունը կդառնա ճշվածների և շահագործվածների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքական ուժ: «Մենք չենք լինի աջ կամ ձախ», -ասել է նա և հայտարարել, թե Թուրքիայի խորհրդարանում հայազգի պատգամավորի ներկայությունը կհիշեցնի այդ երկրին իր պատմության մասին: «Թուրքիան խիզախություն չունի հայացք շրջել դեպի իր պատմությունը», -նկատել է հայազգի քաղաքական գործիչը: Նկատենք, որ Շահինը ժամանակին փորձում էր քողական «խաղաղության կուսակցության» միջոցով մտնել խորհրդարան, սակայն հետագայում հրաժարվեց: «Այդ կառույցը հիմնված է միայն քողական տարրի վրա», -ասել էր նա: **HayNews.am**

Շասարակական

«լույս»-ը ստացել է հետևյալ գրությունը Ախալքալակից



2011թ. ապրիլի 18, Ախալքալաք-Երևան

ԱՄՆ պետքարտուղարության 2010թ. մարդու իրավունքների գեկույցում ջավախքահայության խնդիրները ներկայացված են թերի և խեղաթյուրված կերպով

2011թ. ապրիլի 8-ին ԱՄՆ պետքարտուղարությունը հրատարակեց 2010թ. մարդու իրավունքների մասին գեկույցը:

Ինչպես և անցյալ տարի, այս տարի նույնպես գեկույցի (<http://www.state.gov/documents/organization/160457.pdf>)՝

Վրաստանին վերաբերող մասում ջավախքահայության իրավունքների ոտնահարման փաստերը ներկայացված են խիստ թերի և խեղաթյուրված կերպով: Մասնավորապես գեկույցում արտացոլված չեն ջավախքահայության իրավունքների ոտնահարման հետևյալ փաստերը.

- Ջավախքահայության հասարակական-քաղաքական կյանքը գտնվում է վրաց ուժային կառույցների շարունակական, ուղղակի և տոտալ վերահսկողության ներքո: Ոստիկանության կողմից իրականացվող անօրինական գործողությունների միջոցով (ճնշումներ, սպառնալիքներ, անօրինական կալանք, շինծու քրեական գործերի հարուցում և այլն) արմատախիլ են արվում ջավախքահայության հասարակական բողոքի անգամ չնչին դրսևորումները:

- Հայաբնակ շրջաններում հոգուտ Մասկաշվիլիի «Ազգային շարժում» իշխող կուսակցության կեղծվեցին 2010թ. մայիսին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքները:

- Վրաստանի օրենսդրությամբ արգելվում է ստեղծել քաղաքական կազմակերպություններ տարածաշրջանային հիմքի վրա: Դրա հետևանքով ջավախքյան քաղաքական կառույցները ընտրություններին մասնակցելու համար ստիպված են ուղիներ փնտրել համավրաստանյան որևէ քաղաքական կուսակցության ընտրական ցուցակներում ընդգրկվելու համար: Սա էապես խոչընդոտում է հայ բնակչության շահերը ներկայացնող հասարակական-քաղաքական ուժերի մասնակցությանը հանրային կյանքին:

- Վրացական իշխանությունները արագացված տեմպերով շարունակում են համախումբ հայ բնակչություն ունեցող շրջաններում հանրային կյանքի բոլոր ոլորտներում վրացերեն լեզվի բռնի պարտադրման քաղաքականության իրականացումը՝ արհամարհելով հայերենին մարզային լեզվի կարգավիճակ տալու ջավախքահայության պահանջները: Դրանով կոպիտ ոտնահարվում են Վրաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները, այդ թվում՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության Եվրոպական շրջանակային կոնվենցիայի դրույթները:

- Սամցխե-Ջավախք նահանգում հայերն, ըստ պաշտոնական տվյալների, կազմում են բնակչության 55%-ը, սակայն նրանք գրեթե ներկայացված չեն նահանգի կառավարման մարմիններում:

- Վրացական իշխանությունները շարունակում են սահմանի վրա անօրինական խոչընդոտներ ստեղծել հայալեզու գրականություն և մամուլ Ջավախք փոխադրելու հարցում:

Զեկույցում արդարացիորեն նշվում է, որ ջավախքահայերը բողոքում են հայերենին մարզային լեզվի կարգավիճակ տալու վրաց իշխանությունների դժկամությունից, սակայն դրանից անմիջապես հետո ավելացվում է, որ «ըստ որոշ ՀԿ-ների՝ վրաց լեզվի ուսուցման վիճակը բարելավվել է»: Դրանով ԱՄՆ պետքարտուղարությունը կարծես թե անուղղակիորեն քաջալերում է իշխանություններին շարունակել Ջավախքում վրաց լեզվի արագացված և բռնի ներդրման իրենց քաղաքականությունը, որը ջավախքահայության դժգոհության հիմնական աղբյուրներից մեկն է:

2010թ. գեկույցում չեն շտկվել շինծու մեղադրանքների հիման վրա 10 տարվա ազատազրկման դատապարտված ջավախքահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի գործին վերաբերող անճշտությունները: Մինևույն ժամանակ, որպես դրական երևույթ, պետք է արձանագրել, որ նոր գեկույցում ԱՄՆ պետքարտուղարությունը զետեղել է հայկական կողմի ծանրակշիռ փաստարկներն առ այն, որ Վահագն Չախալյանը բանտարկվել է ջավախքահայության իրավունքների պաշտպանությանն ուղղված իր հասարակական-քաղաքական գործունեության պատճառով: Համեմատելով գեկույցի Վրաստանին վերաբերող հատվածը տարածաշրջանի այլ երկրներին վերաբերող մասերի հետ, կարելի է արձանագրել, որ նշելով Վրաստանում արդար դատավարության բացակայության, իշխանությունների կողմից դատական համակարգի վերահսկողության և քաղաքական դրդապատճառներով հետապնդման երևույթների մասին, երևույթներ, որոնցից տուժում են նաև ջավախքահայերը, ԱՄՆ պետքարտուղարությունն այնուամենայնիվ խուսափում է դրանց համարժեք գնահատականներ տալ՝ Վրաստանի հանդեպ կիրառելով երկակի չափանիշներ:

ԱՄՆ՝ որպես Վրաստանի հիմնական գործընկերներից մեկը, իրենց գեկույցում չլուսաբանելով Վրաստանում մարդու և ազգային փոքրամասնությունների տարրական իրավունքների ոտնահարման հիմնական փաստերը, ըստ էության արտոնում են Սաակաշվիլիի վարչակարգին շարունակել իր խտրական քաղաքականությունը: Դրանով ԱՄՆ իշխանությունները «արջի ծառայություն» են մատուցում Վրաստանին, քանի որ վրաց իշխանություններին ներկա գործելաճճ օրեցօր ավելացնում է Վրաստանի քաղաքացիների, այդ թվում նաև՝ ջավախքահայերի դժգոհությունը:

Ելնելով վերոնշյալից՝ Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը կոչ է անում ԱՄՆ իշխանություններին իրենց գեկույցներում առավել անաչառ կերպով ներկայացնել Վրաստանի հայ բնակչության խնդիրները, ինչպես նաև ակտիվացնել ջանքերը մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում Վրաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների լիարժեք կատարումն ապահովելու ուղղությամբ:

Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդ

Կոչ Արցախից

«Լույս»-ը Արցախից ստացել է հետևյալ գրությունը

Հարգելի՛ Էդիկ Բաղդասարյան, Ձեզ դիմում ենք Արցախից՝ խնդրելով աջակցել մեր նախաձեռնությանը և սույն ձեռնարկի մասին տարածելով Ձեր լրատվամիջոցով, մեր հայրենակիցներին տեղեկացնել, որպեսզի միանան ստորև ներկայացված եռալեզու դիմում-նամակում հնչեցված կոչին և ցուցաբերեն իրենց աջակցությունը:

Լշենք, որ Ձեր կողողինատները մենք ստացել ենք Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության կողմից լրագրողների համահայկական 5-րդ համաժողովի համար տպագրված գիրք-ծրագրից:

Կանխավ հայտնում ենք շնորհակալություն՝ հուսալով, որ անհրաժեշտ եռանդ կցուցաբերեք մեր նախաձեռնությունը պաշտպանելու համար:

Հանձնախմբի անդամ և համակարգող Վահրամ Պողոսյան հեռ. +374 97 200506

Դիմում-նամակ արցախյան գոյամարտի ազատամարտիկ, առաջին կարգի հաշմանդամ Արծվիկ Սևույանի նախաձեռնող խմբի կողմից

Հարգելի՛ հայրենակից, մեզանից յուրաքանչյուրը յուրովի է սիրում Հայրենիքը, և մեզ բոլորիս միացնողը հենց այդ անսահման սերն է:

Արցախյան գոյամարտի ազատամարտիկ, առաջին կարգի հաշմանդամ Արծվիկ Հրաչիկի Սևույանը այն երիտասարդներից մեկն է, ով արցախյան պատերազմի տարիներին չերկմտեց և իր կյանքը դրեց Հայրենիքի գոհասեղանին:

Ա. Սևույանը ծնվել է 1967թ Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ծեխեր գյուղում: 1990թ անդամագրվել է գյուղի ինքնապաշտպանական ջոկատին: Բացի գյուղի պաշտպանությունից նա՝ որպես հետևակի զինվոր, մասնակցել է Ֆիզուլու, Նորադիզի, Աղդամի, Մարտակերտի և Քարվաճառի շրջանների ազատագրման շուրջ երկու տասնյակ մարտական գործողությունների: Պատերազմի ժամանակ /1993թ/ թշնամու արձակած արկի ստացած բեկորային վիրավորման հետևանքով այժմ նա ծանր հաշմանդամ է և մեր բոլորի աջակցության կարիքն ունի: Վերջին ժամանակներս Արծվիկ Սևույանի առողջությունը սկսել է վատթարանալ, և բուժման նպատակով նրան պետք է շտապ Իսրայել տանել /Մադրասսս հիվանդանոց, Երուսաղեմ/ հակառակ դեպքում հետևանքը կլինի անդառնալի: Այդ նպատակով անհրաժեշտ է 42 հազար ԱՄՆ դոլար: Քանի որ խոսքը պատկառելի գումարի մասին է, մենք՝ նախաձեռնող խմբի անդամներս, կոչով դիմում ենք բոլորին Ձեր համեստ մասնակցությամբ աջակցել՝ մեր ազատամարտիկի կյանքը փրկելու համար:

Արծվիկ Սևույանը 2008թ ԼՂՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով: Անուանացած է, ունի երեք անչափահաս երեխաներ՝ երկու տղա ու մեկ դուստր, և ընտանիքով հանդերձ ապրում է Մարտունու շրջանի Ծեխեր գյուղում:

Դիմում-նամակի տակ ստորագրել են հետևյալ կազմակերպությունների ղեկավարները, որոնք հանդես են գալիս որպես նախաձեռնող խմբի անդամներ (ցանկը ստորև ներկայացնում ենք հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով)

- 1. *ՏԼՂՀ գոհված ազատամարտիկների հարազատների միություն/ ՇԿ ղեկավար Գայյա Առուսյան*
- 2. *ՏԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն/ ՇԿ ղեկավար Վերա Գրիգորյան*
- 3. *ՀՊՅՑ Էյան . Ձ/Յ ՄՅ Ռ/ Շ Վիրավոր ազատամարտիկների Ե. ԿձՁ/Յ Կ ՏՎիտա/ ՇԿ նախագահ Արևիկ Պետրոսյան*
- 4. *ՏԱզատ Հայրենիք/ կուսակցության /ԼՂՀ/ երիտասարդական թևի ղեկավար Վահրամ Պողոսյան*
- 5. *ՏԱրցախի Ժողովրդավարական կուսակցության/ երիտասարդական թևի ղեկավար Սերգեյ Մելքունյան*
- 6. *ՀՅԴ Արցախի երիտասարդական միության վարիչ մարմնի ներկայացուցիչ Լեռնիկ Հովհաննիսյան*
- 7. *Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի երիտասարդաց միության ղեկավար Մամվել Մկրտչյան*
- 8. *Արցախի ազատամարտիկների միության ՏՀայրենյաց Պաշտպան/ երիտասարդական թևի ղեկավար Գեղամ Ստեփանյան*
- 9. *ՏԱրցախի երիտասարդ մարդկանց քրիստոնեական ընկերակցություն/ ՇԿ ղեկավար Դավիթ Մելքունյան*

Ստորև ներկայացնում ենք Արծվիկ Սևույանի համար բացված բանկային հաշվեհամարները, որի միջոցով բոլոր ցանկացողները կարող են ցուցաբերել իրենց աջակցությունը **For transfers in USD:**

Intermediary Bank:
Deutsche Bank Trust Company Americas, New York
SWIFT: BKTR US 33

Beneficiary's bank:
UNIBANK, Armenia, SWIFT: UNIJ AM 22

Beneficiary: Sevumyan Artsvik
USD Account No: 24112003145501

«ԻՐԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Էմմա Բեգիջանյանի այս գիրքը, բացի գիտականից, ունի նաև պրակտիկ քաղաքական նշանակություն

Մինչ համայն հայությունը պատրաստվում էր նշել Մեծ Եղեռնի 96-րդ տարելիցը, Երեւանում լույս տեսավ Էմմա Բեգիջանյանի «Իրանական տեսակետները Հայոց ցեղասպանության մասին» գիրքը: Նախքան գրքի բովանդակությանն անդրադառնալը նշենք, որ թեման Հայաստանում ուսումնասիրված չէ, ինչը առանձնակի կարեւորություն է հաղորդում գրախոսվող աշխատությանը:



Բեգիջանյանի աշխատությունը 163 էջ է, ունի նախաբան, առաջաբան, հայերեն, ռուսերեն եւ անգլերեն ամփոփում, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկ, որն իրականում բնագիր սկզբնաղբյուրների ցանկ է: Գրքի խմբագիրն ու նախաբանի հեղինակը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանն է:

Առաջաբանը գրի է առել հեղինակը, որտեղ նա նշում է, որ մինչև 1975 թ. թեև ապրիլի 24-ն իրանահայերի համար եղել է ոչ աշխատանքային օր, սակայն Մեծ Եղեռնի 60-րդ տարելիցին, երբ նրանք փորձել են այդ օրը նշել երթով դեպի Իրանում թուրքիայի դեսպանատուն, շահի վարչակարգի անվտանգության ուժերն իսկույն ցրել են նրանց, այնուհետև ընդհանրապես արգելել բողոքի ցույցերը: Իրանում 1979-ի իսլամական հեղափոխությունից հետո միայն իրանահայությանը տրվել է ապրիլի 24-ը անարգել նշելու հնարավորություն:

Որքան էլ Իրանի իսլամական Հանրապետությունը պաշտոնապես չճանաչի Հայոց ցեղասպանությունը, իրանցի ժողովրդի լավագույն ներկայացուցիչներն ի սկզբանե դատապարտել են օսմանյան թուրքիայում արգուլիամիոյան եւ երիտթուրքական վարչակարգերի իրականացրած ցեղասպանությունը հայերի դեմ: Նրանց ուշադրությունից չեն վրիպել նաև 1909 թ. Ադանայի ջարդերը: Հատկանշական է, որ ժամանակակից կարգավիճակով Հայոց Մեծ Եղեռնին ու կոտորածներին արձագանքել է 1904-1922 թթ. իրանական մամուլը: Իրենց հուշերում Մեծ Եղեռնին մանրամասն անդրադարձել են նաև իրանցի ականատեսները, որոնցից թերևս պետք է առանձնացնել հայտնի գրող Մոհամմադ Ալի Չամազդադեին, որի կենդանության օրոք լույս տեսած հուշերն այնուհետև այլ հեղինակները բազմիցս վերահրատարակել են:

«Եվս մեկ հուշ» վերնագրով հրատարակվել է նաև Մեծ Եղեռնի մեկ այլ ականատեսի՝ հայտնի դիվանագետ Ալի Ռեզա Դիվանբեգիի երկհատորյա հուշագրությունը, որի առաջին հատորում նա վշտակցելով, չափազանց կարեւոր տեղեկություններ է հաղորդում Վանի վիլայեթի հազարավոր հայերի կոտորածների, ինչպես նաև ճանապարհին կմախքացած տարագիրների ողբերգական իրավիճակի մասին:

Բացի հուշագրություններից, Իրանում հրատարակվել են Մեծ եղեռնին նվիրված ուսումնասիրություններ, մասնավորապես հայտնի պատմաբան, հրատարակիչ Էսմայիլ Ռայիսի «Հայոց ցեղասպանությունը» մենագրությունը, որը 1972-ին լույս է տեսել Թեհրանում: Էմմա Բեգիջանյանն ընդարձակ մեջբերումներով հայ ընթերցողին է ներկայացնում իրանցի ականատեսների Մեծ Եղեռնին առնչվող հուշերը, «Հայոց ցեղասպանությունը» մենագրությունը, ցեղասպանության տարելիցներին իրանահայ համայնքի կազմակերպած միջոցառումների նկատմամբ Իրանի իսլամական Հանրապետության իշխանությունների վերաբերմունքը:

Շնորհիվ Էմմա Բեգիջանյանի «Իրանական տեսակետները Հայոց ցեղասպանության մասին» աշխատության, մեկը հնարավորություն ենք ստանում ծանոթանալու նաև արտերկրում ապրող իրանցի գիտնականների, մտավորականների Մեծ Եղեռնին առնչվող հոդվածներին եւ այլ հրապարակումներին: Գիրքը բացի գիտականից, ունի նաև պրակտիկ քաղաքական նշանակություն: Հատկապես Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացի ներկա փուլում, երբ թուրքիան ցեղասպանության պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականությունը փորձում է իբրեւ ճշմարտություն մատուցել իսլամական աշխարհին, իսկ Մեծ Եղեռնի ժամանակակից իրանական մամուլը, իրանցի ականատեսների հուշագրությունները, «Հայոց ցեղասպանությունը» թեմայով Իրանում հրատարակված ուսումնասիրությունները, հոդվածներն ու հրապարակախոսությունները, հակակշռելով թուրքական այդ փորձը, ի չիք են դարձնում մահմեդական երկրներին ժխտողականության շուրջը համախմբելու թուրքիայի նկրտումները:

Ի՛նչ հարցեր են քննարկելու հայ մատններն իրենց առաջիկա համաժողովում. Օրակարգում է նաև ԼՂ հարցը



Հունիս 25, 2011 | 16:04

Երեւանում հուլիսի 1-11-ը տեղի ունենալիք աշխարհասփյուռ հայ մատնների համաժողովի մասին պաշտոնական տեղեկություն ստանալու NEWS.am-ի փորձերն ապարդյուն անցան, քանի որ այն կազմակերպությունները, որոնք առնչվում են մատնական շարժման հետ, հերքեցին իրենց կապը մատնների հետ եւ չցանկացան որեւէ բան ասել ժողովի մասին: Ըստ մամուլի տեղեկությունների՝ նշված համաժողովը ավանդաբար տեղի է ունենալու «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում: Երբ NEWS.am-ը փորձեց հյուրանոցի միջոցառումների բաժնից ճշտել, թե իրո՞ք նման հավաք նախատեսված է նշված ժամկետում, համապատասխան աշխատակիցը հրաժարվեց որեւէ տեղեկություն հայտնել: Նա մի քանի ռուպե սպասեցնելուց հետո հայտարարեց, որ հյուրանոցն իր այցելուներին է նրանց կազմակերպած միջոցառումների մասին ոչ մեկին տեղեկություն չի տրամադրում:

Ըստ տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկությունների՝ մինչ օրս Հայաստանում անդամագրված շուրջ 100 մատններ կան, որոնք ճանաչված են համաշխարհային մատնական կազմակերպությունների կողմից: (Հայաստանի մատնական կազմակերպությունը կրում է Հայաստանի գերագույն օթյակ՝ Grand Lodge of Armenia անունը): Որպես մատն՝ շրջանառվում է նաև «Սոցիոմետր» կենտրոնի նախագահ, սոցիոլոգ Ահարոն Աղիբեկյանի անունը: Պարզվում է, սակայն, որ նա կապ չունի մատնների հետ, պարզապես կա մատն Ահարոն անունով մեկը, ում հաճախ շփոթում են Ահարոն Աղիբեկյանի հետ:

«Ես մատն չեմ, եւ չեմ էլ ուզում դառնալ, սակայն ունեմ ընկերներ, որոնք մատն են եւ չեն թաքցնում, քանի որ կարծում են, որ այդպիսով ծառայում են Հայաստանին»,-ասաց Աղիբեկյանը եւ փոխանցեց «երկրորդային աղբյուրներից» ստացած իր տեղեկությունները տեղի ունենալիք համաժողովի մասին: «Հայաստանն այն երկիրն է, որտեղ մատնական շարժումը սկսել է Կիլիկյան Հայաստանում՝ Տաճարականներից: Իմ տպավորությամբ՝ նրանք կարծես թե ուզում են վերադառնալ հայրենիք եւ Հայաստանը սարքեն Եպիկենտրոններից մեկը»,-

ասաց նա, հավելելով, որ մասոնական շարժման կենտրոնը Անդրկովկասում դառնում է Հայաստանը եւ եթէ Վրաստանում կամ Ադրբեջանում որեւէ մասոնի վարպետի կոչում պիտի շնորհվի, ապա նա պետք է գա եւ Հայաստանում ստանա այդ կոչումը:

NEWS.am-ը խնդրեց Ադրբեյջանին՝ փոխանցել իր ընկեր մասոնների կոնտակտները, սակայն նա հրաժարվեց՝ նշելով, որ նրանց կփոխանցի գործակալության հեռախոսահամարն ու եթէ նրանք հարկ համարեն՝ իրենք անձամբ կգանգահարեն մեզ: Չանգահարողներ, սակայն, այդպես էլ չեղան:

Մասոնական կազմակերպություն համարվող «Երեւանի Ռոտարի ակումբը» եւս տեղեկություն չհաղորդեց տեղի ունենալիք համաժողովի մասին: Ակումբի հիմնադիրներից մեկը՝ Արմեն Ավետիսյանը, նշեց, որ իրենց ակումբն ընդհանրապես կապ չունի մասոնների հետ: «Ռոտարի ակումբներն ամբողջ աշխարհի մակարդակով, բացարձակապես ոչ մի կապ չունեն մասոնների հետ: Մի հին ասացվածք կա մի գիժ քարը գցում է հորը, հարյուր խելոք չեն կարողանում հանել: Այսբան բան»,-արձագանքեց Ավետիսյանը: Նա նաեւ վիրավորական համարեց մեր հարցը, թե գուցե տեղյակ է եւ ինչ որ բան հաղորդի տեղի ունենալիք համաժողովի մասին:

NEWS.am-ին, այնուամենայնիվ, հաջողվեց է տարբեր իրագեղ արջյուրներից տեղեկանալ մասոնական համաժողովի օրակարգի մասին, որում ի թիվս մի քանի տեխնիկական հարցերի, ներառված է նաեւ ԼՂ հարցի շուրջ վերջին մեկ տարվա զարգացումների քննարկումը:

«Նախատեսված է France-Armenie Lodge No.2 օթյակի ներկայացուցչության եւ ԱՄՆ պետդեսպարտամենտի ներկայացուցչի ելույթի լուում Դարաբաղի հարցի շուրջ»,- հայտնեց մեր աղբյուրը: Օրակարգում է նաեւ գործող իշխանությունների պաշտոնավարմանը գնահատական տալու հարցը:

Նշենք, որ ըստ մամուլի հրապարակումների, մասոնները աշխատանք են տանում Երեւանում Մասոնական տաճարի կառուցման համար հող հատկացնելու ուղղությամբ: Մասոնական հավաքատեղին նախատեսված է կառուցել Վահագնի թաղամասում:

Մասոնությունը կրոնա-բաղաբական շարժում է, որն առաջացել է XVIII դարում որպես հատուկ առաքելությամբ միջազգային գաղտնի կազմակերպություն: Մասոնական օթյակների (լոժաների) անդամներ են եղել պատմությանը շատ հայտնի եւ տաղանդավոր մարդիկ: Ինչպես հայտնի հասարակական-բաղաբական գործիչներ, պետությունների ղեկավարներ, արքաներ, այնպես էլ նկարիչներ, ճարտարապետներ եւ երգահաններ: Պատմությանը հայտնի են շատ դեպքեր երբ այդ շարժումը հետապնդվել է տարբեր պետություններում, իսկ շարժման մասնակիցները հալածանքների են արժանացել:

Ներկայումս մասոնությունն ամբողջ աշխարհում ունի շուրջ հինգ միլիոն անդամ: Մասոնական օթյակներ կան աշխարհի բազմաթիվ երկրներում:

ՈՎԵԹՐ ԵՆ «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27»-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ
Ազգային անվտանգության սպայի վերլուծությունը

«Ես Հայաստանի ազգային անվտանգության համակարգի սպա եմ, արդեն 5 տարի՝ նախկին սպա, չնայած մենք «նախկին» չենք լինում: Այժմ ես ապրում եմ Եվրոպայում եւ ներկայացնում իմ վերլուծությունը՝ հիմնված իմ սեփական տեղեկությունների վրա՝ Հայաստանում տեղի ունեցած որոշ իրադարձությունների կապակցությամբ», այս տողերով է սկսվում համացանցային louyswordf.com էջում հրապարակված վերլուծությունը՝ «Ո՞վ կազմակերպեց հոկտեմբերի 27-ը», խորագրով: Վերլուծությունը ապրիլի 16-ի համարում հրապարակեց «Գոլոս Արմենիի» պարբերականը:

Սպան հիշում է, որ երբ ինքը աշխատում էր Իսրայելում, իրենց տեղեկացրել էին, որ «ոմն Լեւոն

Տեր-Պետրոսյան Հայաստանից, կնոջ եւ անչափահաս որդու հետ դիմել է Իսրայել՝ այնտեղ բնակություն հաստատելու խնդրանքով: Չնայած նրա կինը՝ Լյուդմիլա Տեր-Պետրոսյանը Լենինգրադի հրեական համայնքի անդամ էր, իսկ նրա մոր քեռին՝ Ռուսաստանի հրեական համայնքի ղեկավարը, Տեր-Պետրոսյանի այս խնդրանքը մի քանի անգամ մերժել էր: Լեւոն Տեր-Պետրոսյանի առջեւ նախապայման էր դրված՝ կամ պետք է համագործակցի պետական անվտանգության հետ, կամ նա պետք է ունենար խնդիրներ. Տեր-Պետրոսյանը որոշեց համագործակցել: Անցան տարիներ, եւ 1988-ին մենք նորից լսեցինք Լեւոն Տեր-Պետրոսյանի անունը, որ նա մասնակցում էր հանրահավաքներին: 1988-ի ամռանը ես գործուղման մեջ էի Հայաստան: Հերթական հանրահավաքներից մեկից հետո, երբ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները սուրճ էին խմում մոտակա սրճարաններից մեկում, ես նրանց մեջ ճանաչեցի մեկին, որը Թել Ավիվում մեր դեսպանատան անվտանգության աշխատակիցներից էր, բնականաբար՝ «Մոսսադ»-ի գործակալ: Այս ամենից հետեւաբար՝ Հայաստանում այդ տարիներին աշխատում էր «Մոսսադը», նրանք ցանկանում էին, որ ժողովրդին ղեկավարի Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ընդ որում՝ հրեաներն ունեին հեռահար նպատակներ. տարածաշրջան բերել «Բրիթիշ Փեթրոլիում»-ին: Հրեաներին պետք չէին լրացուցիչ խոչընդոտներ նավթի ճանապարհին, այդ իսկ պատճառով նրանք անում էին հնարավոր ամեն բան, որպեսզի Հայաստանում իշխանության գա Լեւոն Տեր-Պետրոսյանը: Արդեն 1994-ին անգլիացիները ստորագրեցին կոնսորցիում, որը ադրբեջանցիներին մեծ շահույթ էր խոստանում, եթե նավթատարը կառուցվեր: Սակայն այս ճանապարհին անհրաժեշտ էր շուտափույթ լուծել դարաբաղյան հիմնահարցը: Հենց այս հարցում էլ որոշիչ դեր պետք է խաղար Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նավթատարի շինարարության համար անհրաժեշտ էր 7-8 տարի, Լեւոն Տեր-Պետրոսյանին ոչ ոք չէր շտապեցնում, սակայն 1996-ին կայացած նախագահական ընտրություններում առաջացան լուրջ խնդիրներ: Պահանջվեց շուրջ մեկ տարի, որպեսզի վերընտրված Տեր-Պետրոսյանը նորից անհրաժեշտ ուժ հավաքի, սակայն ի հայտ եկավ նոր խնդիր: 1998-ի սկզբին Հայաստանում Վազգեն Սարգսյանն ու Ռոբերտ Զոչարյանն իրականացրին պետական հեղաշրջում: Հենց այդ ժամանակ «նավթային արքաները» հասկացան, որ հարցը հեշտությամբ չի լուծվի: Ռոբերտ Զոչարյանը նախագահն էր, եւ անկհայտ էր, որ նրան այդ պաշտոնում փոխարինելու է Վազգեն Սարգսյանը: Միեւնույն ժամանակ՝ անիմաստ էր սպանել Զոչարյանին, քանի որ իրական ուժը գալիս էր Վազգեն Սարգսյանից, որին նավթային մագնատները հենց այդ ուժի համար դատապարտեցին մահվան: Առանց Վազգեն Սարգսյանի շատ ավելի դյուրին կլիներ շարքից հանել նաեւ Ռոբերտ Զոչարյանին: Այստեղ հատկանշական է նկատել, որ «Մոսսադը» սխալվեց՝ հույսը դնելով Տեր-Պետրոսյանի վրա, վերջինս էլ՝ Վանոյի, Վանոն էլ՝ իր բանդայի ղեկավար Տեր-Սահակյանի: Հատկանշական է, որ նախքան 1998-ի հունվարի հեղաշրջումը Տեր-Սահակյանը հայտարարեց, որ շուտով իրենք կլուծեն «Վազգենի հարցը»: Նույնը օրը նա ձեռքբալվեց: Վանո Սիրադեղյանը պատգամավորական անձեռնմխելիություն ուներ, եւ նրան ձեռքբալվելու համար պետք էր խորհրդարանի թույլտվությունը: Հենց

այդ ժամանակ էլ Վանոն հայտարարեց, որ «շուտով Վազգենից կմնա միայն կամուֆլյաժը»: Վազգեն Սարգսյանի «չեզոքացումը» հանձնարարված էր Նաիրի Գունանյանին, որը ամենեւին էլ նրանց համար «անծանոթ մեկը» չէր: Դեռևս 1999-ի հոկտեմբերի 27-ից մի քանի տարի առաջ Գունանյանը ընդունվել էր Նախագահի աշխատակազմ՝ մամուլի քարտուղար Լեւոն Չուրաբյանի եւ խորհրդական Վահագն Խաչատրյանի միջնորդությամբ: Իսկ «ինչպես սպանել», Գունանյանը «սովորել» էր Թուրքիայում: Գունանյանը սերտ կապեր ուներ «Չորրորդ իշխանություն» թերթի խմբագիր Շողեր Մաթեոսյանի եւ ԶԾ վարչության անդամ Արմեն Մանուկյանի հետ: Հատկանշական է, որ Սիրադեղյանն իր համար «պահեստային տարբերակ» էր մշակել հոկտեմբերի 27-ին, եթե պլանը ձախողվեր: Նա սպանությունից հետո այցելեց Ֆրանսիական դեսպանատուն, առաց, որ իրականացնողները դաշնակներ են, որ հավանաբար նաեւ իրեն պետք է սպանեն եւ խնդրեց քաղաքական ապաստան, սակայն ֆրանսիացիները մերժեցին:

Ինչո՞ւ ընտրվեց հենց հոկտեմբերի 27-ը, քանի որ հենց այդ օրերին ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան պաշտոնյա Սթրոբ Թելբուրը բանակցություններ էր վարում Երեւանում դարաբաղյան հիմնահարցով: Հոկտեմբերի 27-ի կազմակերպիչները կանխատեսել էին, որ սա լավ առիթ է հետքանությունը այլ՝ սխալ ուղղությամբ տանելու, քանի որ պարզ էր, որ Վազգեն Սարգսյանը օժտված է ռուսական քաղաքական եւ ռազմական վերնախավի աջակցությամբ: Ինչեւէ, հոկտեմբերի 27-ի երեկոյան ՊՆ-ում տեղի ունեցավ բազմամարդ խորհրդակցություն: Բացի սպայական բարձրաստիճան կազմից, Սարգսյանի ընկերներից, այս խորհրդակցությանը մասնակցում էր նաեւ Վանո Սիրադեղյանը: Խորհրդակցության ժամանակ Վահան Շիրխանյանը հանեց մի գրություն, որը ԶԾ նոր կառավարության կազմն էր, որտեղ Շիրխանյանին տրված էր վարչապետի պաշտոնը: Բոլոր ներկաների համար այս գրությունը անակնկալ էր, միայն ԶԾ-ի ղեկավարությունը «ամենամտերիմներին» էր հայտնել ահաբեկչական ակտի մանրուքները: Բանն այն է, որ հիշյալ ակտի կարեւորագույն մասը սկսվելու էր գիշերը՝ 1-ից հետո: Հենց այդ ժամանակ Սիրադեղյանը եւ Շիրխանյանը պետք է համոզեին գեներալներին, որ անհրաժեշտ է գրոհով հետ գրավել Աժ դահլիճը՝ սպանելով Գունանյանին ու նրա խմբի անդամներին: Բացի սրանից՝ Վազգեն Սարգսյանի հուղարկավորության հաջորդ օրը, Զոչարյանը, բանակի գեներալների ճնշման ներքո, պետք է հրաժարական տար...: Պլանը չիրականացավ զուտ այն պատճառով, որ Զոչարյանը բավական խելամիտ գտնվեց. նա հասկացավ, թե ինչո՞ւ է պահանջվում գրոհով վերցնել Աժ դահլիճը՝ սպանելով Գունանյանի խմբի բոլոր անդամներին: Զոչարյանը կարողացավ այնպես անել, որ գրոհը տեղի չունենա, եւ Գունանյանը մնա ողջ: Եզրակացնելով՝ սպան ընդգծում է. «Այսպիսինս է Հայաստանի պատմության ամենախոշոր հանցագործության՝ հոկտեմբերի 27-ի» պատմությունը, որը միակ նպատակ պետք է իրագործեր. վերադարձնել իշխանության Լեւոն Տեր-Պետրոսյանին, որպեսզի նա իրականացնի հրեաների նավթային ծրագրերը»:

Մշակույթ

Հայերեն տպագրության 500-ամյակին նվիրված (1512-2012)

ԻՆՉ ՏՊԱՔԱՆԱԿՈՎ ԵՆ ԼՈՒՅՍ ՏԵՍՆՈՒՄ ԳՐՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշխատացիրեց Էդ. Բաղդասարյանը

Հայերեն առաջին տպագիր գիրքը «Ուրբաթագիրքը», լույս է տեսել 1512 թվականին, Վենետիկում Հակոբ Մեղապարտի ջանքերով: Անցած հինգ դարերի ընթացքում աշխարհի այլևայլ կողմերում լույս է տեսել ավելի քան 100 հազար անուն հայերեն գիրք: 1512 թվականից մինչև 1800 թվականը լույս է տեսել հազարից ավելի գիրք: Այդ գրքերը կոչվում են հնատիպ: 1801 թվականից մինչև 1920 թվականը լույս է տեսել 19 հազար անուն հայերեն գիրք: 1921 - 89 թվականներին Հայաստանում տպագրվել է 55 հազար անուն հայերեն գիրք մի քանի հարյուր միլիոն տպաքանակով: Այդ նույն ժամանակաշրջանում, այսինքն՝ 1921-89-ին, սփյուռքում լույս է տեսել 25 հազար անուն հայերեն գիրք: Այսպիսով, մինչև այժմ լույս տեսած հայերեն բոլոր գրքերի թիվը անցնում է 100 հազար անուն գրքից, որի կեսից ավելին և տպաքանակի 80 տոկոսը տպագրվել է Հայաստանում իսկ մնացյալը՝ Սփյուռքի զանազան գաղթօջախներում:

Մենք ստույգ չգիտենք, թե ինչ տպաքանակ է ունեցել հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: Հավանաբար այն լույս է տեսել մի քանի հարյուր օրինակով: Մինչև 1920 թվականը լույս տեսած հայերեն գրքերը մեծ տպաքանակներ չեն ունեցել: Այդ թիվը Վենետիկում ու Վիեննայում տատանվել է 300-ից 2000-ի միջև: Համարյա նույնն էր նաև նախախորհրդային շրջանի հայ տպագրության մյուս կենտրոններում՝ Կոստանդնուպոլսում, Թիֆլիսում, Երևանում, Բաքվում, Մոսկվայում, Նոր Ջուղայում: Սփյուռքում էլ հայերեն գրքի միջին տպաքանակը չի անցնում 500-ից: Նախախորհրդային շրջանում բացառիկ դեպքեր են եղել, երբ որևէ հայերեն գիրք տպագրվում էր 5 հազար կամ ավելի տպաքանակով: Ցուցադրական է Բաֆֆու երկերի տպաքանակը նախախորհրդային շրջանում և խորհրդային իշխանության տարիներին: Նրա կենդանության օրոք լույս են տեսել հետևյալ գրքերը.

- «Փունջ» գրքի առաջին հատորը լույս է տեսել 1874 թվականին, 1500 տպաքանակով: Փունջ գրքի Բ հատորը նույն տարում, 1500 տպաքանակով:
- «Խենթը» վեպը՝ 1880-ին, 1200 տպաքանակով:
- «Դավիթ Բեկ» գրքի առաջին հատորը 1881-ին, 1200 տպաքանակով:
- «Դավիթ Բեկ» գրքի Բ հատորը 1882-ին, 1200 տպաքանակով:
- «Խամսայի մեկիջությունները» գիրքը 1882-ին, 1200 տպաքանակով:
- «Ոսկի աքաղաղ» գիրքը՝ 1882-ին, 1200 տպաքանակով: «Նարաբադի աստղագետը» գիրքը 1882-ին, 1200 տպաքանակով:
- «Կայծեր» գրքի առաջին հատորը 1883-ին, 1200 տպաքանակով:
- «Խաչագողի հիշատակարանը» գրքի Ա և Բ մասերը մեկ գրքով՝ 1883-ին, 1200 տպաքանակով:
- «Խաչագողի հիշատակարանը» գրքի Գ և Դ մասերը մեկ գրքով՝ 1883-ին, 1200 տպաքանակով:

«Ձալալերդին» ԳՐԲԸ 1884-ին, 2000 տպաքանակով:

«Կայծեր» գրքի Բ հատորը 1887-ին, 1200 տպաքանակով: «Սամվել» վեպի Ա, Բ և Գ հատորները՝ 1888-ին, 1800 տպաքանակով:

Րաֆֆին իր կենդանության օրոք հրատարակել է 11 անուն գիրք՝ 16 հատորով և 21 հազար 200 տպաքանակով: Այդ գրքերից երկուսը թարգմանություններ են, ինը՝ ինքնուրույն գործեր: 14 տարվա ընթացքում Րաֆֆու գործերից միջին հաշվով տարեկան լույս է տեսել 1500 գիրք: Բայց չափտի կարծել, թե լույս տեսած գրքերն ամնիջապես սպառվում էին: Միջին հաշվով Րաֆֆու գրքերից սպառվում էին տարեկան 120—200 օրինակ: 1903 թվականին «Դավիթ Բեկ» վեպը լույս է տեսել 2400 օրինակ, որը սպառվել է 12 տարում: «Սամվել» վեպը տպագրվելուց հետո սպառվել է 10 տարում:

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում Րաֆֆու երկերը լույս են տեսել 65 անգամ՝ 2 միլիոն 326 հազար տպաքանակով:

Խորհրդային Հայաստանում տպագրված 55 հազար անուն հայերեն գիրքը վիթխարի հարստություն է: Հայաստանում մեծ տպաքանակներով մի քանի անգամ տպագրվել են հայ ինքնուրույն և թարգմանական գրականությունը: Մի քանի անգամ լույս են տեսել Կոռյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Մովսես Կաղանկատվացու, Սեբեոսի, Ղևոնդ Պատմագրի, Մեսրոպ Մաշտոցի, Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Թովմա Արծրունու, Արիստակես Լաստիվերցու, Մատթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի և ուրիշ պատմիչների, պատմագիրների ու գիտնականների երկերը: Տասնյակ և հարյուր հազար տպաքանակներով լույս են տեսել Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Սայաթ Նովայի, Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Պերճ Պռոշյանի, Մուրազյանի, Ղազարոս Աղայանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Ռաֆայել Պատկանյանի, Հակոբ Պարոնյանի, Սկրտիչ Պեշկեպաշյանի, Պետրոս Դուրյանի, Ծերենցի, Միսաք Մեծարենցի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Երվանդ Օտյանի, Տիգրան Չյուլյուրյանի երկերը: Խորհրդային շրջանում լույս է տեսել մեծանուն հայագետ ու գրականագետ Մանուկ Աբեղյանի երկերի 8 հատորյակի ակադեմիական հրատարակությունը: Աբեղյանական մեծադիր հատորներից յուրաքանչյուրը լույս է տեսել 7 հազար տպաքանակով: Վախթանգ Անանյանի հրատարակած երկերի ընդհանուր տպաքանակը անցնում է կես միլիոնից: Ատրպետի «Տժվժիկը» լույս է տեսել մի քանի անգամ, համարյա 100 հազար տպաքանակով: Հայաստանի ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը լույս է ընծայել Ակսել Բակունցի երկերի չորս հատորյակը՝ յուրաքանչյուրը 20 հազար տպաքանակով: Վաղամեռիկ գրող, տաղանդավոր արձակագիր Մուշեղ Գալշոյանի միայն «Մարութա սարի ամպերը» գիրքը 1980 թվականին լույս է տեսել 25 հազար տպաքանակով: Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպակը երկրորդ անգամ լույս տեսավ 1984 թվականին՝ 50 հազար տպաքանակով: Ավարտին հասավ Դերենիկ Դեմիրճյանի երկերի ժողովածուի 14 հատորյակի հրատարակությունը (յուրաքանչյուր հատորը լույս է տեսել 25 հազար տպաքանակով):

Ստեփան Ջորյանի միայն ինքնուրույն երկերը լույս են տեսել 1 միլիոն տպաքանակով, որից «Հայոց բերդը» վեպը 1959 թվականին լույս է տեսել 40 հազար տպաքանակով, «Վարազդատ» վեպը 1969-ին՝ 30 հազար տպաքանակով, «Ճանապարհորդ, Ջեկոն» պատմվածքը 1978-ին՝ 100 հազար տպաքանակով: Մեկ միլիոնից անցնում են Ստեփան Ջորյանի թարգմանությամբ լույս տեսած հայերեն գրքերը:

Հայաստանում ամենից շատ տպագրվող հայ հեղինակը Հովհաննես Թումանյանն է: 1920-1990 թվականների 70 տարում Թումանյանի գրքերը լույս են տեսել մի քանի միլիոն տպաքանակով: Սկսվել է նրա երկերի ակադեմիական 10 հատորյա հրատարակությունը: Հսկայական տպաքանակներով են լույս տեսել Ավետիք Իսահակյանի գրքերը: Նրա երկերի ժողովածուի 6 հատորյակը լույս է տեսել 60 հազար տպաքանակով, իսկ «Լույս» հրատարակչությունը նրա «Երկերը» 1980-ին հրատարակել է 50 հազար տպաքանակով:

Անվանի գրող, Սերո խանգաղյանի գրքերը լույս են տեսել զրեթե 50 անգամ: Խանգաղյանի գրքերի ընդհանուր տպաքանակը հասնում է մեկ միլիոնի: Մեկ միլիոնի է մոտենում նաև ճանաչված մանկագիր Խնկր Ապր երկերի տպաքանակը: Միայն «Մկների ժողովը» գրքույկը 1983 թվականին լույս է տեսել 100 հազար տպաքանակով:

Մեծ տպաքանակներով են լույս տեսել Սիլվա Կապուտիկյանի չափածո ու արձակ երկերի ժողովածուները:

1970-1990 ժամանակաշրջանում Հովհաննես Շիրազի երկերը լույս են տեսել տասնյակ հազարավոր տպաքանակներով: Ահավասիկ. «Քնար Հայաստանի» ժողովածուի երրորդ գիրքը 1974-ին լույս է տեսել 50 հազար տպաքանակով, «Յոթնապատում» գիրքը 1977-ին՝ 50 հազար տպաքանակով, «Սիամանթո և խաջեգարե» գիրքը 1979-ին՝ 50 հազար տպաքանակով, «Հուշարձան մայրիկիս» գիրքը 1980-ին՝ 60 հազար տպաքանակով:

Մեկ միլիոնի է մոտենում Շիրվանգադեի երկերի ընդհանուր տպաքանակը: Միայն «Քաոս» վեպը 1975-ին լույս է տեսել 50 հազար տպաքանակով:

Վիթխարի տպաքանակներ ունեն Եղիշե Չարենցի գրքերը: «Հայ դասականների գրադարան» մատենաշարով լույս տեսած նրա երկերի տպաքանակը 51 հազար է: 1985 թվականին «Լույս» հրատարակչությունը լույս ընծայեց Չարենցի «Երկերը» 50 հազար տպաքանակով:

Պարույր Սևակի բոլոր գրքերը լույս են տեսել 50 հազար տպաքանակով:

50 հազար տպաքանակով էին լույս տեսնում նաև համաշխարհային դասականներից հայերեն թարգմանված գրքերը:

Հայաստանում բանաստեղծությունների ժողովածուները սովորաբար լույս էին տեսնում 3—5 հազար տպաքանակով, իսկ անվանի բանաստեղծներ Համո Սահյանի, Վահագն Դավթյանի, Հրաչյա Հովհաննիսյանի և ուրիշների գործերը տպագրվում էին 10—25 հազար տպաքանակներով:

Մանուկների համար նախատեսված գրքերը լույս էին տեսնում 20 — 100 հազար տպաքանակներով: Միայն 1980-1990 թթ. 100 հազար տպաքանակով լույս է տեսել 70 անուն գիրք: «Արևիկ» հրատարակչությունը 1988 թվականին սկսեց «Համաշխարհային գրականություն պատանիների համար» 50 հատորյա մատենաշարը, յու-

րաքանջյուր հատորը՝ 100 հազար տպաքանակով: Այդպիսի ծավալուն մատենաշարի այդքան վիթխարի տպաքանակով հրատարակելը աննախադեպ երևույթ է հայ տպագիր գրքի պատմության մեջ: Մատենաշարի առաջին հատորում տեղ են գտել Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» եւ Չարլզ Դիկենսի «Օլիվեր Թվիստի արկածները» վեպերը:

Հայ գրքի տպագրության լուսապսակ կարելի է համարել Հայկական Սովետական Հանրագիտարանը (13 հատորով), որի յուրաքանչյուր հատորը լույս է տեսել 100 հազար տպաքանակով:

Մեր ժամանակներում 100 հազար տպաքանակը մեծ թիվ է նույնիսկ այնպիսի պետությունների համար, ինչպիսիք են Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան կամ Իտալիան: Բայց հիանալին սա է, որ փոքրիկ Հայաստանում 1990-ից առաջ երբեմն դժվար էր լինում ձեռք բերել այն գրքից, որը լույս է տեսել 100 հազար տպաքանակով: Խորհրդային Հայաստանում միջին հաշվով գրքերի տարեկան տնայնակը 10-13 միլիոն էր:

Գրքատեր է հայ ժողովուրդը, գրքի հանդեպ շարունակում է տածել հնամայն պաշտամունքը: 100 հազար գիրքը միայն երեվանում սպառվում էր մի քանի ժամում: 1962 թվականին ամերիկյան նշանավոր նկարիչ ու հասարակական գործիչ Ռոբուել Քենտը տեսնելով, թե երևանի կենտրոնական գրախանութում երևանցիներն ինչպես են գնում Նոր լույս տեսած գրքերը, ասաց, «Հայերի գրքասիրությունը չափ ու սահման չունի: Խորհրդային Հայաստանի մեծագույն հրաշալիքներից մեկն էլ սա է»:

1991 թվականից հետո երբ Հայաստանը անկախություն հայտարարեց, երկիրը ընդկղմվեց բազմաթիվ բարդությունների մեջ՝ 1988 թվականի կործանարար երկրաշարժի հետեւանքները, Արցախյան պատերազմ, տնտեսական ահավոր ճգնաժամ եւ հասարակական-քաղաքական բազմաթիվ հարցեր, որոնք Հայաստանն ու Հայ ժողովուրդը մատնեցին սարսափելի ճգնաժամային իրադրության եւ այսպիսով մեծ անկում ապրեց ի շարս շատ այլ հարցերի նաեւ հայ գրքի տպագրությունը, այսօր միջին գրքի տպաքանակը 300-500 է Մայր հայրենեքում: Հայաստանի երկրորդ նախագահը հայտարարեց որ Հայաստանի կառավարությունը ձգտում է երկիրը հասցնի խորհրդային ժամանակի մակարդակի, որը ըստ մեզ տասնյակ տարիների բուռն աշխատանք եւ պետական հստակ ազգային պլանավորում է պահանջում:

ՎԱՆՃԱՆՎԵԼ Ե ԱՆԴՐԱՆԻԿ ՉԵԼԵՊՅԱՆԸ

Ապրիլի 12-ին ութսունինը տարեկանում Սաութֆիլդի իր բնակարանում (Դետրոյթ) վախճանվել է պատմական մի շարք ուսումնասիրությունների հեղինակ դոկտ. Անդրանիկ Չելեպյանը, տեղեկացնում է «Արմինյն միորո սփեթթեթթթթթթ» շաբաթաթթթթթթի ապրիլի 23-ի համարը:

Չելեպյանը հայտնի էր հատկապես իր առաջին՝ «Չորավար Անդրանիկ» պատմական աշխատությամբ, որը Հայաստանում հրատարակվեց 1984-ին 75 հազարից ավելի տպաքանակով, եւ որի հասույթը նա հատկացրեց դարաբաղյան շարժմանը: 1989-ին Հայաստանի պետհամալսարանում նա պաշտպանեց իր դոկտորականը, որից հետո գիրքը թարգմանվեց նաեւ թուրքերեն եւ իսպաներեն:

Չելեպյանը ծնվել է Քեսաբում 1922-ին: Ավարտել է տեղի հայ ավետարանական վարժարանը, ուսանել Հալեպի ամերիկյան քոլեջում, որտեղ 1945-1949 թթ. դասավանդել է անգլերեն եւ թվաբանություն: 27 տարի անընդմեջ աշխատել

է Բեյրութի ամերիկյան համալսարանի բնախոսության բաժանմունքում: 1977-ին Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով գաղթել է ԱՄՆ եւ աշխատանքի անցել ՅԲԸՄ Ալեք Մանուկյան վարժարանում:

1991-ին հրատարակել է իր երկրորդ գիրքը՝ «Հեղափոխական դեմքեր» խորագրով, որը լույս է տեսել նաեւ անգլերենով դոկտ. Արա Ավագյանի թարգմանությամբ: 1999-ին հրապարակ է հանել իր երրորդ գիրքը՝ «Հայաստանը իսլամի առաջացումից հետո» վերնագրով (անգլերեն): Իսկ 2003-ին՝ չորրորդ գիրքը՝ «Դրոն»:

«Լույս»-ին հրած հաղորդագրություն Երեւանից Թեքեյան Կենտրոն

2010թ. «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի համար աննախադեպ տարի էր, քանզի առաջին անգամ իրականացվեց «Օժանդակություն հայ դպրոցին» նախագիծը:

Այս փորձ-ծրագիրը նախաձեռնվեց Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի նախագահ Վարդան Ուզունյանի կողմից եւ հաստատվեց Հոգաբարձուների Խորհրդի կողմից որպես շարունակական բնույթ կրող նախագիծ, որը մեծապես կնպաստի դպրոցների միջեւ փոխադարձ կապերի եւ համագործակցության ամրապնդմանը, ինչպես նաեւ աշակերտների կրթության եւ սոցիալական վիճակի բարելավմանը, ինչն էլ Հիմնադրամի առաջնային նպատակներից է:

«Աջակցություն Թեքեյան դպրոցներին» ծրագրի ընդհանուր բյուջեն կազմեց մոտ ԱՄՆ 17,000 դոլար: Այն իրականացվեց մի քանի փուլով եւ շարունակվեց ողջ տարվա ընթացքում՝ ընդգրկելով Հայաստանի տարբեր մարզերում գտնվող Վահան Թեքեյանի անունը կրող չորս դպրոցները: Ծրագիրը մեծ հաջողություն ունեցավ, ողջունվեց եւ սիրվեց թե՛ աշակերտների եւ թե՛ ուսուցիչների կողմից:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը, ի դեմս նախարար Արմեն Աշոտյանի, բարձր գնահատանքի արժանացրեց «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի 2010թ. գործունեությունը: Հիմնադրամին ուղղած իր նամակում նախարարը նշեց Թեքեյան Կենտրոնի նախաձեռնած «Օժանդակություն հայ դպրոցին» ծրագրի կարեւորությունը, ինչի մասին վկայում են առաջին փուլի արդյունքները:

Նախարարը հատկանշեց Հիմնադրամի նոր առաքելությունը՝ դասագրքեր եւ գրականություն անվճար հատկացնել Հայաստանի եւ Արցախի դպրոցների կարիքավոր երեխաներին, ինչպես նաեւ «Գրքահավաք» ծրագիրը, որը կհամարի դպրոցական գրադարանները: Նախարար Աշոտյանը ողջունեց Հիմնադրամի կողմից կազմակերպված տարբեր առարկայական մրցույթները, որոնք դրական են ազդում երեխաների ուսման վրա:

Նախարարը Հիմնադրամին առաջարկեց մասնագիտական խորհրդատվություն, մասնագետների տրամադրում եւ աջակցություն Հիմնադրամի ծրագրերի իրականացման հարցում:

Ունենալով նախորդ տարվա հաջող փորձը, ստանալով դրական արձագանքներ թե՛ դպրոց-մասնակիցների եւ թե՛ համապատասխան պետական կառույցների կողմից, Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհուրդը որոշում կայացրեց ավանդական դարձնել միջոցառումների ծրագրերը եւ այդպիսով խրախուսել դպրոցականներին՝ ամրապնդելու նրանց սերը դեպի դպրոցն ու գիտելիքը:

2011թ. Հիմնադրամը նպատակ ունի կրկին անգամ իրականացնել մի շարք կրթական, մշակութային, մարզական եւ հանգստյան ծրագրեր:

Ծրագրերի շարքը բացում է ս.թ. ապրիլի 13-ին Թեքեյան Կենտրոնում կայանալիք թեքեյանական առարկայական օլիմպիադան՝ «Մաթեմատիկա» եւ «Հայոց լեզու,

գրականություն» առարկաներից: Մասնակցում են աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցներից:

ԸՆՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանը տնտեսական ու մշակութային զգալի առաջընթաց ապրեց: Ավելի քան 130 հազար հայեր Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից տեղափոխվեցին Արևելյան Հայաստան: Ձարդացավ քաղաքային կյանքը, արդյունագործությունը, առևտուրը և ճանապարհաշինությունը: Դա խթանեց բնակչության դասակարգային շերտավորմանը, հասարակական, քաղաքական մտքի աշխուժացմանը:

Հայ հասարակական-քաղաքական հոսանքները իրենց առաջադրած տնտեսական ու սոցիալական, քաղաքական ու գաղափարական ծրագրերով բաժանվում էին հիմնականում երեք խմբի:

Հին, ավատատիրական կարգերի պահպանման կողմնակիցներ, լիբերալ բուրժուական շարժում, որը կապիտալիստական հարաբերությունների զարգացման ջատագովն էր, և հեղափոխական-դեմոկրատական, որը պայքարում էր հեղափոխական ճանապարհով վերացնելու թե՛ ավատատիրական կարգերը, և թե՛ ցարական ինքնակալությունը:

Հավատարիմ մնալով ցարական ռեակցիոն քաղաքականությանը, պահպանողական հոսանքի ներկայացուցիչները դեմ էին դուրս դալիս հայ ժողովրդի բոլոր կարգի քաղաքական, ինչպես նաև ազգային-ազատագրական շարժումներին: Մինչև անգամ սուլթանիզմի դեմ բարձրացող Ձեյթունի ապստամբությունը նրանք բնութագրում էին որպես «տղայական երազ», որպես «վտանգավոր մտայնություն»: Այդ ուղղության ամենապահպանողական տպագիր օրգաններն էին Մոսկվայում Մսերյանի հրատարակած «Ճառքաղը» (1859-1862), «Համբավաբեր Ռուսիոն» (1861-1864), Այվազովսկու խըն- բագրած «Մասյաց Աղավմին» (1855 -1865), ինչպես և Հովհ. Չամուռճյանի հրատարակությունները:

XIX դ. կեսերին երկրում տնտեսական կյանքի զարգացումն ու բուրժուական հարաբերությունների ընդլայնումը ամենուր իրենց զգացնել էին տալիս: Հայ լիբերալիզմը կապված էր զարգացող բուրժուազիայի հետ և քանի որ հայ բուրժուազիան ավելի շուտ սկսեց զարգանալ Ռուսաստանի հայ գաղթավայրերում, ապա այդ հոսանքը իր դասակարգային արմատներով կապված էր գաղթավայրերի հետ: Պետերբուրգը, Մոսկվան, Ղրիմը, Նոր Նախիջևանը, Աստրախանը, Հյուսիսային Կովկասի քաղաքները, Թիֆլիսն ու Բաքուն ավելի սերտորեն էին կապված լիբերալ շարժման հետ, քան թե բուն Հայաստանը, որտեղ ավատատիրական կարգերը դեռ խոր արմատներ ունեին:

Արևելահայ լիբերալիզմի ականավոր դեմքը Ստ. Նազարյանն էր իր հրատարակած «Հյուսիսափայլ» ամսագրով, որն ակնառու դեր խաղաց բուր- ժուա-դեմոկրատական գաղափարների ձևավորման և տարածման բնագավառում: Ստ. Նազարյանը հայ ազգի փրկությունը չէր կապում ոչ աստծու ողորմության և ոչ էլ տիրակալների հզորության հետ: Ստ. Նազարյանը փա- ռաբանելով ուրիշ ժողովուրդների՝ հերոսական պայքարով ձեռք բերած ազատությունը, հայ ժողովրդին զինված ապստամբության կոչ չարեց: Ըստ Ստ. Նազարյանի հայ ժողովրդի փրկության հույսը ոչ թե պետք է կապել զինված պայքարի, այլ բարոյական ինքնապաշտպանության, լուսավորության, նյութական բարեկեցության հետ. դրանք պետք է նրան զորություն տային եւ դիմադիր ուժ հանդիսանային օտար բռնությունից չկլանվելու համար: Ստ. Նազարյանը պայքարի էլավ ռեակցիայի և հետադիմության դեմ և դաշկնճեց ռուսահայ դեմոկրատիայի, հատկապես Միքայել Նալբանդյանի հետ: Սակայն նա մնաց

եվրոպական քաղաքակրթության ուղին բռնած հայ լիբերալ բուրժուազիայի նպատակներն արտահայտողի ու գաղափարախոսի իր դիրքերում:

Հայաստանի զարգացման ուղին մատնանշելով, Ստ. Նազարյանը գտնում էր, որ անհրաժեշտ է ռուսական արդյունաբերության հետ կապվելով առաջ մղել առևտուրը և այդպիսով անցնում կատարել դեպի գործարանային և ֆաբրիկային արդյունաբերությունը: Գյուղատնտեսության զարգացման ուղին նա համարում էր կապիտալիզմի ուղին և կոչ էր անում, որ հայ երի- տասարզները եվրոպական ուսում, պոլիտեխնիկական կրթություն ստանան:

Շար. 7

Սոհեթ

Մեր անցած ձամբան

Թ. Ղարախանյան Միքակցի

Ժամանկը կարճ էր, արագ քայլերով Քարուն կամուրջը անցանք մտանք քաղաք, մի քանի հոգի ձախ ու աջ գնացին ու ես “24 Մեթրի” փողոցը վերեւ քայլեցի, մորաքրոջս ընտանիքին «մնաք բարով» ասելու եւ խնդրել մերոնց լուր տան, որ «բախտի բերմամբ թե պատահմամբ» վիճակահանության խաղը ինձ զինվորության կանչեց: Չոհաբերող ու կարոտալի Մորաքրոջս ընտանիքը տխրեցին ու շշմեցին ինչ ասել, այս հասկանալով մի քիչ կատակներով հարցը փոխեցի եւ վերջապես հրաժեշտ տվի: Ընկա համբուրների եւ աղոտքների մեջ, մի քիչ էլ «տաքսի դրամ» ստիպելով գրպանս լցրեցին, ազնվական մորաքրոջս ընտանիքը բարի զինվորություն մաղթելով կապույտ չամադանս ուտելիք-չարազ լցրեցին եւ բարի վերադարձ մաղթեցին եւ խոստացան մերոնց էլ որ դեռ Մասչեղ Մուլայման էին մի ձեռ լուր տան: Մտքովս անցավ որ ... “դե մեր տներում հո թեղեֆոն չկար, գուցե շոֆեր Ապրահամի միջոցով մերոնց լուր կտային”: Ապրահամին Նաֆտի ընկերությունից դուրս էին արել իր Անգլիացի մեծի *ՄԵՄՐԱՄ* խոսքը չսեղու համար եւ որոշել էր անկախանալ եւ իր համար անձնական գործ ստեղծել... այդպիսով շոֆերություն իմանալով, իր 1965-ի Շեվրոլեթ կապույտ ու ճերմակ գեղեցիկ մեքենայով գրեթե ամեն օր Մասչեղ-Մուլայման եւ Ավիզա քաղաքների միջու, հաճախորդներ էր տեղափոխում, քայց միայն հայ:

Ամենաբարի ու գոհաբեր մորաքրոջս ձայնն է դեռ հնչում ականջներումս, որ «ջանիտ մեռնեմ...» ասելով ու աղօթքներով, ինձ ու մերոնց բարին էր ցանկանում: Եւ այդպես... ինքնավստահ քայլերով մնաք բարով ասեցի եւ առանց ժամանակ կորցնելու հասա վարպետ ընկեր Սաքոյի խամուրք, որը դեռ բաց էր: Ընկեր Սաքոն կոշիկ կարելու պահին, կես ժպիտը երեսին գլուխը բարձրացրեց եւ պստիկ կապույտ չամադանս տեսնելով, ժպիտը կորցրեց ու տխրեց միայն ասաց «էյ դադ»: Հանգստացնելով իրան ասացի «Սաքո ջան, տեսար պարոն Մինասյանը ինչ ասաց, “ԿԸ-ԳԸՍ ԻՄ ՄՈՏ”»: Եւ չամադանս վերցնելով վարպետ ընկորոջս ասեցի՝ «Արա ջան եկել եմ մերսի ասեմ, զինվոր եմ գնում, էս էլ ինչ Սեփահե Դանեշ, -Ուսման Չորք-»: Եւ վարպետ Ընկեր Սաքոյից խնդրեցի ինքն էլ վարպետ ընկեր Համոն իմ կողմից մերսի ու մնաք բարով ասի եւ կես կատակով ասեցի «Դե իրան ասա էլ չուզեցի քո տաք-տաք գրույցը կին հաճախորդներիդ հետ, խանգարեմ»:

Եւ դեպի Քարուն գետի կամուրջը քայլելով, վերադարձա զինվորական կենտրոն եւ ինձ ներկայացրի սպա «Բորեյրի»-ին:

Տարիներ անց, երբ Անգլիայի Լոնդոն քաղաքի Սըրրի “London, Surrey” շրջանում, Արաղանից եկած մեր բարեկամ՝ հարգելի եւ սիրելի Անուշ եւ Թոնիից տանք տաք-տաք գրույցում էինք Պարսկաստանի եւ Կիպրոսի հայության մասին եւ երանի էինք տալիս այդ ժամանակաշրջանի խոսք ու հարազատ, ազնիվ ու գոհաբեր բարեկամության եւ ընկերության մասին, չգիտեմ ինչպես եղավ որ երեքս միասին բացականչեցինք«ՈՍԿԵ ՍԵՐՈՒՆԻ, ՈՍԿԵ ՍԵՐՈՒՆԻ»:

Այստեղ, հուզմունքից եւ սիրով ու կարոտով լցված Անուշն էր որ երեսը շրջեց իր արտասուքները մեզանից գաղտնի մաքրելով:

Տասնյակ տարիներ անցան...տաքեր երկրներ ապրեցինք, հայ ու ոչ-հայի հետ աշխատեցինք ու շփվեցինք, տեսանք եւ լսեցինք...ու դեռ մինչեւ օրս այդ կարծիքին եմք մնացել...